ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՏՈՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԽԱՂԱՂ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ 1992 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ատոմային էներգիայի խաղաղ նպատակներով օգտագործման բնագավառում համագործակցության հիմնական սկզբունքների մասին 1992 թվականի հունիսի 26-ի համաձայնագրի մասնակից պետությունները, այսուհետ՝ Կողմեր,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Ատոմային էներգիայի խաղաղ նպատակներով օգտագործման բնագավառում համագործակցության հիմնական սկզբունքների մասին 1992 թվականի հունիսի 26-ի համաձայնագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. 1-ին հոդվածի «ա» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«լիազոր (իրավասու) մարմին - նախարարություն, գերատեսչություն, պետական միավորում կամ այլ կազմակերպություն, որն ապահովում է Կողմերի գործունեության համակարգումն ատոմային էներգիայի խաղաղ նպատակներով օգտագործման բնագավառում, որի նշանակման (փոփոխության) մասին Կողմերը ծանուցում են ավանդապահին»:

2. 9-րդ և 11-րդ հոդվածներում «կառավարության իրավասու մարմիններ» բառերը փոխարինել «լիազոր (իրավասու) մարմիններ» բառերով՝ համապատասխան հոլովներով:

3. 12-րդ հոդվածի 1-ին կետի «երկարաձգվում է» բառը փոխարինել «ինքնաբերաբար երկարաձգվում է ամեն անգամ» բառակապակցությամբ:

4. Համաձայնագրի հավելվածը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 2

Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում Կողմերի՝ ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին երրորդ ծանուցումն ավանդապահի ստանալու օրվանից 30 օր հետո:

Ներպետական ընթացակարգերն ավելի ուշ կատարած Կողմերի համար սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում համապատասխան փաստաթղթերն ավանդապահի ստանալու օրվանից 30 օր հետո:

Կատարված է Մինսկ քաղաքում 2013 թվականի մայիսի 31-ին, մեկ բնօրինակով, ռուսերենով: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության գործադիր կոմիտեում, որը դրա վավերացված պատճենը կուղարկի սույն Արձանագրությունն ստորագրած յուրաքանչյուր պետության:

Արձանագրությունը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2014թ. օգոստոսի 8-ին